MyHome խաղարկության պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

Խաղարկությունը կազմակերպվում է MyHome հարթակի կողմից՝ 2026 թվականի նոյեմբերի 13-ին, 14-ին և 15-ին կայանալիք Toon Expo միջոցառման շրջանակում։

Խաղարկությանը կարող են մասնակցել այն անձինք, որոնք նշված օրերին Toon Expo-ի տարածքում գտնվող Ամերիաբանկի և MyHome տաղավարում առաջին անգամ գրանցվում են MyHome հարթակում և կատարում սույն պայմաններով նախատեսված մասնակցության քայլերը։

Խաղարկությանը մասնակցությունն անվճար է։

2. Մասնակցության կարգը

Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է՝

1. 2026 թվականի նոյեմբերի 13-ին, 14-ին կամ 15-ին MyHome տաղավարում գրանցվել MyHome հարթակում։
2. Գրանցումից հետո MyHome-ի ներկայացուցչին ցույց տալ գրանցումը հաստատող welcome email-ը։
3. Ստանալ խաղարկության համար նախատեսված երկմաս կտրոնը / sticker-ը։
4. Կտրոնի վրա լրացնել հետևյալ տվյալները՝
    - անուն, ազգանուն,
    - MyHome-ում գրանցման համար օգտագործված էլեկտրոնային փոստի հասցե,
    - հեռախոսահամար։
5. Կտրոնի համապատասխան մասը գցել MyHome տաղավարում տեղադրված խաղարկության արկղի մեջ, իսկ երկրորդ մասը պահել մինչև խաղարկության ավարտը։

Մասնակցի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեն պետք է համընկնի MyHome հարթակում գրանցման ժամանակ օգտագործված էլեկտրոնային փոստի հասցեի հետ։

Խաղարկության մասնակցության կտրոնը տրամադրվում է միայն այն դեպքում, եթե MyHome-ում գրանցումը կատարվել է կտրոնը ստանալու պահին նախորդող առավելագույնը 1 ժամվա ընթացքում, ինչը ստուգվում է գրանցումը հաստատող welcome email-ի միջոցով։

3. Մասնակցության սահմանափակումներ

Յուրաքանչյուր անձ կարող է խաղարկությանը մասնակցել միայն մեկ անգամ:

Եթե հաղթողի ընտրության կամ նախնական ստուգման ընթացքում պարզվի, որ նույն անձը խաղարկության արկղում ունի մեկից ավելի մասնակցության կտրոն, տվյալ մասնակիցը կորակազրկվի և չի կարող հավակնել մրցանակին:

Նույն անձի մասնակցությունը կարող է նույնականացվել ներկայացված անուն-ազգանվան, հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ MyHome հաշվի տվյալների միջոցով:

Եթե արդեն ընտրված հաղթողի դեպքում պարզվի նման խախտում, նրա արդյունքը կհամարվի անվավեր:

4. Հաղթողի ընտրություն

Հաղթողը կընտրվի պատահականության սկզբունքով՝ 2026 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 18:00-ին, Toon Expo միջոցառման վերջին օրը՝ Ամերիաբանկի և MyHome-ի տաղավարում:

Հաղթողի ընտրությունը կկատարվի MyHome-ի թիմի ներկայացուցչի կողմից՝ խաղարկության արկղում առկա և պայմաններին համապատասխան մասնակցության կտրոններից պատահականորեն մեկ կտրոն ընտրելու միջոցով:

Հիմնական հաղթողի հետ միաժամանակ կընտրվի նաև 1 պահուստային հաղթող:

Պահուստային հաղթողի տվյալները չեն հրապարակվի հիմնական հաղթողի ընտրության պահին և կպահվեն կազմակերպչի մոտ: Դրանք կարող են հրապարակվել միայն այն դեպքում, եթե հիմնական հաղթողը չի համապատասխանում խաղարկության պայմաններին, նրա մասնակցությունը ճանաչվում է անվավեր, նրա հետ հնարավոր չէ կապ հաստատել սահմանված ժամկետում կամ նա հրաժարվում է մրցանակից, և մրցանակը փոխանցվում է պահուստային հաղթողին:

Եթե պահուստային հաղթողը ևս չի համապատասխանում սույն պայմաններին, նրա մասնակցությունը ճանաչվում է անվավեր, նրա հետ հնարավոր չէ կապ հաստատել սահմանված ժամկետում կամ նա հրաժարվում է մրցանակից, կազմակերպիչն իրավունք ունի շարունակել խաղարկության արկղից պատահականության սկզբունքով նոր մասնակիցների կտրոնների ընտրությունը մինչև սույն պայմաններին համապատասխանող վավեր հաղթողի ընտրությունը: Նշված լրացուցիչ ընտրության գործընթացը չի հեռարձակվի, սակայն ամբողջությամբ կնկարահանվի:

Հաղթողի ընտրության գործընթացը կնկարահանվի և կհրապարակվի MyHome-ի Instagram-ի պաշտոնական էջում՝ https://www.instagram.com/myhome__am:

Հաղթողի ընտրության պահին մասնակցի ֆիզիկական ներկայությունը տաղավարում պարտադիր չէ:

5. Հաղթողի վավերացում

Հաղթող ընտրվելուց հետո MyHome-ի թիմը կստուգի՝

- արդյոք մասնակցի MyHome գրանցումը կատարվել է 2026 թվականի նոյեմբերի 13-15-ն ընկած ժամանակահատվածում,
- արդյոք գրանցման էլեկտրոնային փոստի հասցեն համընկնում է կտրոնում նշված էլեկտրոնային փոստի հասցեի հետ,
- արդյոք տվյալ անձը մասնակցել է միայն մեկ անգամ,
- արդյոք մասնակցության ընթացքում չեն խախտվել սույն պայմանները:

Եթե հիմնական հաղթողի տվյալները չեն համապատասխանում պայմաններին, նրա հաղթանակը կհամարվի անվավեր, և մրցանակը կտրամադրվի նախապես ընտրված պահուստային հաղթողին՝ վերջինիս տվյալների և մասնակցության համապատասխանությունը ստուգելուց հետո:

Պահուստային հաղթողը կհրապարակվի միայն այն դեպքում, երբ հիմնական հաղթողի հաղթանակը ճանաչվում է անվավեր կամ մրցանակը չի կարող տրամադրվել նրան՝ սույն պայմաններով նախատեսված պատճառներով:

6. Հաղթողի հետ կապ հաստատելը

Հաղթողի հետ կապ կհաստատվի մասնակցության կտրոնում նշված հեռախոսահամարով և/կամ էլեկտրոնային փոստի հասցեով:

Եթե հիմնական հաղթողի հետ հնարավոր չլինի կապ հաստատել 3 աշխատանքային օրվա ընթացքում, նա չներկայացնի անհրաժեշտ տվյալները կամ հրաժարվի մրցանակից, մրցանակը ստանալու իրավունքը կանցնի պահուստային հաղթողին:

Այս դեպքում MyHome-ի թիմը կապ կհաստատի պահուստային հաղթողի հետ, և նրա տվյալները կարող են հրապարակվել MyHome-ի Instagram-ի պաշտոնական էջում:

Նույն պայմանները կիրառվում են նաև պահուստային հաղթողի նկատմամբ:

7. Մրցանակ

Խաղարկության հաղթողը կստանա՝ Dyson ֆիրմայի մազահարդարիչ

Մրցանակը չի կարող փոխանակվել այլ մրցանակի կամ կանխիկ գումարի հետ:

Հաղթողի տվյալների հաստատումից հետո մրցանակը կտրամադրվի 2-3 աշխատանքային օրվա ընթացքում:

MyHome-ի թիմը կապ կհաստատի հաղթողի հետ և կհամաձայնեցնի Ամերիաբանկի այն մասնաճյուղը, որտեղ հաղթողին առավել հարմար կլինի ստանալ մրցանակը:

Մրցանակը ստանալու համար հաղթողից կարող է պահանջվել ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ և իր մոտ պահվող խաղարկության կտրոնի երկրորդ մասը:

8. Խախտումներ և խարդախություն

Կազմակերպիչն իրավունք ունի բացառել մասնակցին խաղարկությունից, եթե հայտնաբերվում է՝

- միևնույն անձի կողմից մեկից ավելի մասնակցություն,
- կեղծ կամ այլ անձին պատկանող տվյալների օգտագործում,
- MyHome-ում կեղծ կամ բազմակի գրանցումների ստեղծում խաղարկությանը մասնակցելու նպատակով,
- մասնակցության գործընթացի կամ հաղթողի ընտրության վրա ազդելու փորձ,
- ցանկացած այլ գործողություն, որը կազմակերպչի ողջամիտ գնահատմամբ կարող է համարվել խարդախություն կամ սույն պայմանների շրջանցում:

Նման դեպքերում կազմակերպիչն իրավունք ունի չեղարկել մասնակցի արդյունքը և, անհրաժեշտության դեպքում, մրցանակը փոխանցել պահուստային հաղթողին:

9. Անձնական տվյալների մշակում

Խաղարկությանը մասնակցելով՝ մասնակիցը համաձայնում է, որ իր կողմից տրամադրված անունը, ազգանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն կարող են մշակվել խաղարկության կազմակերպման, մասնակցության իրավասության ստուգման, հաղթողի ընտրության և հաղթողի հետ կապ հաստատելու նպատակով:

Տվյալները չեն օգտագործվի խաղարկության հետ չկապված այլ նպատակներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մասնակիցը դրա համար տվել է առանձին համաձայնություն կամ դա նախատեսված է օրենքով։

10. Լրացուցիչ պայմաններ

Կազմակերպիչը կարող է անհրաժեշտության դեպքում փոփոխել կամ լրացնել խաղարկության պայմանները, եթե դա չի վատթարացնում արդեն մասնակցած անձանց իրավունքները և պայմանավորված է կազմակերպչական կամ տեխնիկական անհրաժեշտությամբ։

Խաղարկությանը մասնակցելով՝ մասնակիցը հաստատում է, որ ծանոթացել և համաձայն է սույն պայմաններին։